«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

ՀԵՂԻՆԱԿ ՝ **ԱԻԴԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ _

ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՂԵԿԱՎԱՐ ----- ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

2022թ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1

Դարերի պատմություն և համաշխարհային գրական արժեք ունի հայ պոեզիան: Ժողովրդական բանահյուսությունից ու Գողթան երգերից սկիզբ առնելով՝ այն ստեղծել է գրական վիթխարի արժեքներ: Գրեթե բոլոր ժամանակներում էլ պոետների գործերում պատկերվել է մարդկային ապրումների անափ աշխարհը. որը և՛ սեր է, և՛ պանդխտություն է, և՛ տխուր ճակատագիր, և՛ բնության գեղեցկություն, և՛ հայրենիք, և՛ սպասուման մեջ նորածին մանկանը մեծացնող մոր օրորոցային...

Միջնադարի հայ բանաստեղծության մեջ առանձնանում և բարձրանում է Գրիգոր Նարեկացին՝ մարդկային ալեկոծ հոգու մեծ թարգմանը՝ կատարելության ձգտող խռովահույզ հոգին : Դարերի հեռվից նա ոչ թե հնանում է, այլ ավելի է մոտենում նոր սերունդներին՝ հիմք ստեղծելով չափածո խոսքի հետագա զարգացման համար:

Հայ պոեզիայի միասնական ընթացքը ժողովրդի պատմական ճակատագրի բերումով ժամանակի ընթացքում տրոհվեց, առաջացավ արևելահայ և արևմտահայ բնորոշումը:

1915-1920 թվականների ազգային ողբերգությունից սկիզբ առավ հաջորդ բաժանումը, առաջացան ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ և ՍՓՅՈՒՌՔԻ գրականություններ:Պատմական բաժանումներով հանդերձ՝ հայ պոեզիան իր գեղարվեստական ամբողջության մեջ է և մի միասնական համակարգ է: Հայ խորհրդային պոեզիան իր արմատները պատմության քառուղիներում խորացրեց՝ սկսած 1930-ական թվականներից: Այդ տարիներին պոեզիան ձեռք բերեց անցած ճանապարհը վերաիմաստավորող խորհրդածական-փիլիսոփայական բովանդակություն: Զարգացավ քնարական և վիպական պոեզիան՝ վեր հանելով իր տեսակների բազմազանությունը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ պոեզիայում տեղ գտան պայքարի, սպասման, հաղթանակի թեմաները:

1930-1940-ական թվականներին գրական ասպարեզ իջավ տաղանդավոր բանաստեղծների մի խումբ՝ Հ. Շիրազ, Հ. Սահյան, Պ. Սևակ, Ս. Կապուտիկյան, Գ. Էմին, Վ. Դավթյան և ուրիշներ:

Պատերազմից հետո պոեզիան ընկավ անկոնֆլիկտայնության տեսության հարվածի տակ: Նպատակը մարդ-անհատի վտարումն էր գրականությունից, հոգեբանական նրբերանգների անտեսումը:Բայց բանաստեղծների սերունդը տոկաց, 1954 թվականից հետո վերացավ անձի պաշտամունքը, և գրականությունը թևակոխեց զարգացման նոր փուլ:Գրականության մեջ վերահաստատվեց մարդը՝ իր անհատական

ապրումներով ու հոգեբանությամբ: Պոեզիայում առաջնահերթ դարձավ ժողովրդի պատմական երթի քննությունը, կյանքի բազմակողմանի նկարագիրը:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո ասես գրականությունը, մասնավորապես պոեզիան մտան փակուղի:Նոր սերունդը անհաղորդ մնաց անկախացման տարիների պոետների գործերին: Այդ տարիներին հայ գրականության մեջ իրենց պատկառելի խոսքն ասացին Իգնատ Մամյանը, Հրաչյա Սարուխանը, Սամվել Մարտիրոսյանը, Արմեն Մարտիրոսյանը, Ռազմիկ Դավոյանը և ուրիշներ, ավելի ուշ՝Մարո Երկնափեշյանը :

Այսօր աննախադեպ շատ են բանաստեղծները: Համացանցի հասանելիությունը, սոցցանցերի առատությունը հնարավորություն են տալիս ստեղծագործողներին՝ իրենց գործերը ընթերցողներին հասանելի դարձնելու:

Հայ պոեզիան այսօր զարգանում է՝ շարունակելով նախորդ դարի դասական պոեզիայի ավանդները:Պոեզիայում տեղ են գտել հավերժական թեմաները՝ սեր, հայրենիք, բնություն. կենտրոնում 21-րդ դարի մարդն է՝ իր հույզերով, ապրումներով, դարի փոթորկումներով, ապրած ողբերգությամբ...

21-րդ դարը հայ ժողովրդի համար ճակատագրական դարձավ, շարունակվեց և ավելի խորացավ նախորդ դարի վերջից սկսված արտագաղթը: Սոցիալ-տնտեսական վատ պայմանները մարդկանց ստիպեցին լքել հայրենիքը և բախտ որոնել օտար ափերում. բաց երակի պես դատարկվեց Հայաստանը...Չամրապնդվեց սահմանների պաշտպանությունը, կրթությունը, մշակույթը, գրքի հանդեպ սերը հետին պլան մղվեցին: Օտար բարքերը անարգել մուտք գործեցին Հայաստան, մարդկանց ուշադրությունը սևեռվեց շքեղությանն ու ճոխությանը... Եվ վերջապես, հայոց պատմության ամենաաղետալի էջը 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմն էր՝ ամենաարյունոտ ու ամոթալի էջը, հայոց նոր եղեռնը... Թուրքական բայրաքթարների զոհը դարձավ մի ոսկե սերունդ, դրսի ծրագրերով, ներսի ջանքերով գլխատվեց ազգի ապագան...Այս ամենը չէր կարող իր արտացոլումը չգտնել ժամանակակից հայ պոեզիայում:Այսօր իրենց ուրույն խոսքն են ասում և իրենց տեղը հայ պոեզիայի անդաստանում ճշտում մի շարք պոետներ՝ Արմեն Ավո, Անահիտ Տարոնցի, Հայուհի Սուսաննա Ղազարյան, Դավիթ Մշեցի, Գրիգոր Բանանց, Արևիկ Վարդանյան,Նելլի Հակոբյան, Գոհար Եղիազարյան,Բորիկ Բաղդասարյան,Ատոմ Հակոբյան, Գոռ Հարությունյան,Հովի Եգոյան և շատ ուրիշներ:

Գրականություն մտիր հանց Նարեկացի,

Որ երգդ դառնա աղոթք հանապազոր,

Բյուրեղյա, ինչպես մոմից հալվող կաթիլը,

Որ հույզերիդ ճանապարհին դառնա հոգու արցունք... /Ա. Տարոնցի/

Մաքուր պոեզիան պիտի հուզի ընթերցողին,բյուրեղացնի մարդու զգացմունքների աշխարհը, մաքրագործի, ազնվացնի... Տարոնցու քնարերգության մեջ կա միայն իրեն բնորոշ թավշյա մի շերտ. նրբաբույր, գունառատ ելևէջների միջոցով արտաքուստ պարզ թվացող, բայց բարդ ոճի մեջ բանաստեղծուհին ներկայացնում է խորունկ մի աշխարհ՝ ծննդավայրի քարեղեն մագաղաթի պես, որը գեղագիտական ճաշակ է ձևավորում.

Զորերում քարեղեն մագաղաթ,

Բերդերին մամռոտած աղոթք,

Ամեն քար դամբան ու մատուռ,

Հայրենի երդիկն իմ ծխան:

Հայաստան երկրի գոյության քարե խորհուրդը այլ կերպ է պատկերված Արմեն Ավոյի՝ Արմեն Լևոնի Միքայելյանի քնարերգության մեջ/Արմեն Ավո գրական ծածկանունով նրան կնքել է գրականության ուսուցիչը, բայց ինքը այլ կերպ է մեկնաբանում՝ Արցախի Վիրավոր Որդի/ : Նրա գիրը տարբերվում է, անմիջապես մտնում է կարդացողի հոգին ու բյուրեղանում... Արմեն Ավոն՝ զինվոր-պոետը, որ դեռևս չի հասցրել տպագրել իր բանաստեղծությունները, տաղանդավոր է, ստեղծագործում է գրեթե բոլոր ժանրերով ու թեմաներով, գրում է գրական լեզվով՝ երբեմն համեմելով հայրենի Արցախի բարբառի նմուշներով,ականատեսն ու մասնակիցն է 44-օրյա պատերազմի. *հայրենիքը նրա հոգում ու մտապատկերներում է.*

Ես քո մի քարն եմ,

Ես քո մի տառն եմ,

Քո անցած դարն եմ,

Հայաստա՛ն:

Արմեն Ավոն մանկան վճիտ հայացքով ու պարզությամբ է նայում կյանքին, պատկերում է անձնավորված բնաշխարհի ծորուն թախիծը, սիրո մի երանավետ աշխարհ կա նրա պոեզիայում՝ աղբյուրների զվարթ կարկաչի հետ արթնացող հուշերով անհամար, հովիվների անուշ երգով, մեծի խրատով.

Ծով հուշերի անարատից,

Երկու ձեռքով իր մահակի վրա հենված

Ալևորի մի խրատից

Մանկանում եմ...

Հեքիաթ է մանկությունը...Թևեր առած կարոտը մանկության անմեղ աշխարհն է թռչում, ուր չկա ցավ ու դավ, հոգս ու վիշտ:Անաղարտ մանկությունից սկիզբ է առնում ինքնաճանաչման հունով ընթացող մի մարդերգություն:

*Միշտ ազատության ձգտող,մոխիրներից հառնող,ցավն ու վիշտը թոթափող, ավերակներից տուն ու այգի հիմնող բազմատանջ արցախցու և գանձակցու շառավիղն ու հայի դարավոր վշտի արտահայտիչն է Արմեն Ավոն: Բազմալար է նրա քնարը՝սեր, հայրենիք, բնություն, մայր,խոհ...Այս թեմաները երբեմն այնպես են սերտորեն միահյուսված, որ սերը դառնում է հայրենիք, հայրենիքը՝ բնություն, ու չգիտես, սիրու՞ց է հայրենիքին նվիրումը, թե՞ հայրենիքն է սիրո աղբյուրը...*Պոեզիայի ակունքը միշտ օտարների համար կռվախնձոր դարձած, ձեռքից ձեռք անցած, այսօր վիրավոր Արցախ աշխարհն է՝ Վաղուհաս գյուղը: Մի բնակավայր, որն աչքի է ընկնում իրենց գյուղը սիրող ու ծաղկեցնող աշխատասեր մարդկանցով, կեսօրվա տապին ծառի ստվերում նստած ծերերի անուշ զրույցով, ավանդապաշտությամբ, միմյանց հանդեպ տածած սիրով ու ջերմությամբ, հայրենի հողին նվիրվածությամբ.

Այստեղ չկար մի տուն, որ լույսը հանգած լիներ,

Գոցված լիներ դուռը, դաշտ լիներ անհերկ,

Այստեղ պարզությունը մեր կյանքի պես հին էր,

Այստեղ հույսն էր ծաղկում, այստեղ խինդ էր ու երգ:

Հ. Սահյանի նման Արմեն Ավոն հայ պոեզիա է բերում հայրենի սարերի կանչը, բնության մշտանորոգ մեղեդին: Սահյանն անմահացրել է Սյունյաց քարեղեն աշխարհը, Արմեն Ավոն հավերժացնում է հայրենի Արցախը՝ անզուգական բնությամբ, Մռավն ու Քուշաման գետը, Շուշին...Որսալով բնության ոգին՝ ստեղծում է սկիզբ ու վերջ չունեցող իմաստուն զրույց՝ մարդու և բնության կապի մի հոգեհմա աշխարհ, սահյանական աշխարհ.

Հիշեմ մի երգ սահյանական,

Մի նոր աշխարհ հյուսեմ,

Լսեմ ձայնը սոխակների՝

Տխրահուշ ու վսեմ:

Կորած ամպերի ցոլքով է երիզված մայրամուտը, որ բերում է տխրություն ու մենություն: Լքված կածան է ու քարացած բնության մեջ՝ ցամաք ձորում , քարե արձան է, երիցուկներ՝ լուռ ու դժգույն...Բնության ամեն պատկերն ասես լեզու է առել ու խոսում է ընթերցողի հոգու հետ, փարվում մայրամուտի վերջին համբույրով, իսկ կիրճում կորած է մնում մի մերկ լուսաբաց, այսինքն՝ թախիծով է պարուրված ցողաթաթախ մի արշալույս:Աշնանաթախիծ այս տողերում բառերն ապրում են, շնչում, զրնգում, դառնում են հուզաշխարհ ու հոգեվիճակ.

Մենության այց, աշունքի բույր,

Կույր աղբյուրի տրտունջ ու լաց,

Մայրամուտի վերջին համբույր,

Կիրճում կորած մերկ լուսաբաց:

Բնությունը պոետի համար զուլալ մի աղբյուր է, որի ջրից միշտ ըմպում է, բայց չի հագենում, ավելի է ծարավում...Բնության մի մասնիկը՝ անտառը, մի ուրույն աշխարհ է, որտեղ կա բնականոն կյանք, շշուկներ, լռություն, բույրեր կան ու թույրեր վառման...Այս թովիչ աշխարհն է դեռ մանկությունից գերում պոետին, հոգին լցնում մանուկ օրերի հիշողություններով, անուրջներով, թախիծով ու կարոտներով.

Գնամ, հանդիպեմ մանկությանս հետ

Բոբիկ ձորերի ստվերների տակ՝

Մոշոտ կաածանի մշուշների մեջ,

Շրշյունների մեջ մութ ծմակների:

Մանկության անուրջներում հոգնած հնձվորի երգերն են անուշ, ծերերի հայացքները, պապի կարոտը, յասամանների բույրերը, Թարթառի ափին մուգ քարերով տնակներ շինող մանուկների երազանքներն են՝ պարզ ու անմեղ:

Պոետը հոգու ամեն հյուլեով կապված է հայրենի հողին ու ջրին.

Իմ տունն այստեղ է՝ այս սարի լանջին,

Այս ձորին թեքված՝ լուռ անրջում է.

Ես ծնվել եմ այս ձորերի կրծքում,

Եվ մանկությունս այստեղ ննջում է:

Ավարտվող օրվա եզրագծին սահյանական իրիկնահացն իրիկնամուտ է դառնում...Չկա այլևս նահապետական գերդաստանը՝ լավաշ, սամիթ, թանապուր վայելող, փոխարենը՝

...Երբ ծնվի լուսինը երկնքի լճում,

Գիշերվա այցից ծաղիկը լացի,

Կածանին, ձորին կանչեմ և կիրճում

Նրանց հետ նստեմ իրիկնահացի:

Գերդաստանակարոտ հուշերի շշուկին հլու՝ մանկության լուսե հովտում պապի կարոտից ծնվող տողերն են ծանոթ մեղեդու պես կանչում.

Կար ժամանակ...Հավաքվում էր գերդաստանը իմ պապի,

Մեծ ու պուճուր նստում էինք սեղանի շուրջը անուշ,

Ու կաթում էր լուսամուտից ոսկեգանգուր մի արփի,

Ու իջնում էր մեր խրճիթում խաղաղությունը անուժ:

Վաստակած օրվա ջերմություն կա ու խաղաղության տենչ, հոգսն այնքան էլ չեր մտահոգում, քանի որ խաչքարին իջնում էր մի ջինջ խաղաղություն: Գիշերվա խարույկի կողքին ձգվում էր պոետի ու հոր հեռուն գնացող զրույցը...

Նրա հոգին մերթ տագնապում է, մերթ հանգստանում, մերթ երազում է, մերթ դառնում իրատես ու թախծում...Իր խոսքերով ասած՝ <<Գրիչս զենքիս սրտից է խոսում, զենքս՝ գրչիս>>: Զենքն ու գրիչը միաձույլ պաշտպանում են սահմանները Արցախ աշխարհի.

Ես քո վիրավոր որդին եմ, Արցա՛խ,

Քո ժայռից պոկված քարե մի մասունք,

Քո հողից ծնված աղբյուրն եմ խաղաղ,

Հայրերիդ աչքից ընկած մի արցունք...

Արցունք դարձած Արցախի սրտում մորմոքում է բանաստեղծը, իր վիրավոր սրտի ցավն է երգում,ուրիշ սրտերն իր գրով ապրեցնող, մահվան աչքին քանիցս նայած սրտի սիրտն է բացում.

Թվում էր՝ ոչինչ քեզ չի զարմացնի,

Եվ չի ապշեցնի ոչինչ էլ քեզ...

Բայց չէ՞ որ,ի՛մ սիրտ, դաժան է մահից

Ապրելը կյանքում մեռածի պես:

44-օրյա պատերազմը, որ փշրեց մարդկային հոգիները, արցախցուն նորից դարձրեց բնավեր, հայի կենսագրության մասն ու ճակատագիրն է... Պատերազմ կոչվածը բյուր վերքեր բացեց, կործանեց ընտանիքներ, հաշմանդամ՝ անձեռք, անոտք, դարձրեց շատերին...Մի ոսկե սերունդ զոհվեց, մյուսները ծերացան անժամանակ... Մռայլն է պատել հայրենի երկրին , մոլոր հայացքը թափառումների մեջ է... Հայրենիքի խեղճ հյուղակներն է որոնում անլույս մութի մեջ.

Ու քայլում եմ ես շղթայված որդու դաժան կսկիծով

Մութ քաղաքներիս նեղ փողոցներով դալուկ ու անդեմ,

Ավեր տների հայացքը որսում մահացու խոցով

Եվ անմեղության անեծքով լցնում իմ սիրտը անքեն...

Դարավոր թշնամին խարդախությամբ գերել է Արցախը, հանգիստ չունի պոետի հոգին, վիրավոր է հայրենի հողի պես.

Աներազ, դառնակեզ ի՛մ երկիր,

Տխրության ծովի մեջ տապակված,

Քո գրկում դարձել եմ տարագիր,

Եվ իմ դեմ քո հեռուն է փակված...

Հույսն էլ է դարձել վիրավոր, գոցված դռների առաջ կանգնած, <<հույսի բալասան>> է փնտրում... Թևավոր է դառնում հույսը, անհույս դեգերում ու չի գտնում հանգրվան...Մի ամբողջ պատմություն, ժամանակների համադրում, անցյալի ու ներկայի սխալների բացահայտում, ցավ ու մորմոք, լույս, չմարող հույս ու լավատեսություն կա <<Երկիր Արարատյան>> պոեմում:

Ասում են, թե ով ելնում է պայքարի

Հանուն անտես ազատության աշխարհում,

Կամ ընկնում է անտես վիհը խավարի

Կամ դառնում է հավերժական մի գարուն:

Ժամանակի շունչն է պոեմում: 44- օրյա դաժան պատերազմի իրական դեմքը տեսած, մահվան աչքերին ուղիղ նայած հայրենապաշտ զինվորի հոգում կուտակված ցավն ու ցասումն են պոռթկում, ալիք-ալիք դիզվելով՝ վարար հորձանք

տալիս...Խորաթափանց,խորամիտ, իմաստուն պատանու անկեղծ ու համարձակ խոհերն են, մտորումները, տագնապները, կիսված հայրենիքի փրկության ուղիների որոնումը, մերթընդմերթ կայծկլտացող գարունն հույսի...Ազատության երգչի աչքի առաջ կործանվում է հայրենիքը, անզորությունն է սիրտը փոթորկում, տանում խելագարության ուղիներով...

Միակ կատարյալը բնությունն է, ինչպես Ե. Չարենցի <<Դանթեական առասպել>> պոեմում էր: Բնության և մարդու հակադրությունն է ընդգծվում. բնության կատարելությունը մարդն է աղարտում.

Լուսաբացի կարմիր շողքը մտավ ծոցս կույսի պես,

Գեղեցկությու՛ն երանելի ձյունաճերմակ լեռներում,

Ա՛խ, բնություն Արարատյան, հազա՛ր, հազա՛ր օրհնանք քեզ,

Որ ցոլում ես իմ մեջ նոր կյանք անհեռատես աշխարհում:

Հայը հողը հերկելու, տուն կառուցելու... իր հիմնական գործով զբաղվելու փոխարեն քաղաքական հարցերով է զբաղված,բանակն է փլված, ազգի հույս ու վահան զինվորը՝ անտեսված.

Երբ զինվորը ազգի մեջ իրեն մենակ է զգում,

Որպես արծիվ թևաբեկ, որպես լեռան մասրենի՝

Մարտում ներսից խարխլվող երկրի կարոտը սգում,

Թուլանում են երկաթե բազուկները հայրենի:

Աստծո տանը հարստություն են դիզում, իրավունքն է ոտնահարված,պանդուխտի համար հայրենիքը լոկ գերեզման է, ազգի պառակտումը գահի, շահի համար է, դասաժամը աշխատանք է.

Մոխրանում է անծուխ, անբոց ու տարտամ

Գիտելիքի գիտակցության խորին խորհուրդը վսեմ...

Խեղդվում են երազները բիրտ օրենքների ու ազատությունը բանտող շղթաների մեջ, ստի ու կեղծիքի լաբիրինթոսում միտքն է ամլանում: Ոգու սովն է<< եղյամի նման մեզ նորից ծածկում>>: Բնության ներդաշնակությունն է խաթարվում, պղծվում սատանայի ձեռքով, մեր ինքնության խորհուրդն է դրվում կասկածի տակ: Էլ ինչպե՞ս Վահան Տերյանի նման չտագնապի Արարատյան երկրի պոետը.

Մի՞թե պիտի հանճարներդ, որ երկնել են այս հողում,

Ցմահ կորչեն, փոշիանան մրրիկներում աշխարհի,

Եվ երգերդ, որ դարերին հար վեհություն են թողնում,

Մի՞թե պիտի արտասուք, թախիծ դառնան ողբալի...

Այս էլ քանի՛ դար մեր արյան ծարավ թուրք բորենին չի հագենում, ագահ, ծախված հայի ձեռքով մաս-մաս է անում հայրենիքը , մշակույթի արժեքներն է պղծում, ոչնչացնում: Հանուն փառքի ու գահի կործանվում է ազգը հայկյան, բայց Գարիբալդու հավատն է հարկավոր...

Ուրիշի արևը ջերմություն չունի, սառն է, դավող, ցավաբեր ու մահաբեր.

Եղել ենք մենք դարեր ի վեր օտարների համար որս

Եվ լույս տալով օտարներին՝ ընկել վիհերը ամուլ:

Ուրիշ է արևն հայրենի երկրի՝ ջերմ, կենսատու...Հայոց լույս ոգին հույսն է քո արթուն փոթորկված դարի մեղսագործ երթում, զինվո՛ր հայրենյաց .

Որպես կիսված հայրենիքիս որդեկորույս տարագիր,

Որպես զինվոր՝ արյունաքամ ու մոլորված վիհերում,

Նայում եմ քո հեռուներին, արևաշո՛ղ իմ երկիր,

Եվ զգում եմ սրտիս մոտիկ Արարատյան քո հեռուն:

Ու պոետը օտար ափերից հայրենիք է կանչում տարագիր հայերին, կանչում է հանուն ազգի փրկության,կանչում է մեր պապերի օրհնության պես, քանի որ այլընտրանք չկա, հայը կործանվող ազգ չէ, պիտի ապրի՝ ի հեճուկս աշխարհներ պղծող բոլոր նեռերի.

Կանչում եմ ձեզ ցմահ երդման՝ հանուն վաղվա վառ արևի,

Հանուն արյան, որ այս հողում թափվեց երեկ մեզ համար:

Մեր հուր ճամփին արյունաբորբ ազատություն թող վառվի,

Ու թող վառվի մեր աչքերում հայոց ոխը խելագար...

Ապրելու տենչը՝ մանկության արահետների հիշողություններին ձուլված, նորից վրեժ է բորբոքում: Թումանյանական լավատեսությամբ են շնչում պոետի տողերը: Կիսված հայրենիքը նորից պիտի դառնա ամբողջական. դարերի ճանապարհ անցած հայի ոգին ՈՒԺՆ Է ՄԻԱՍՆԱԿԱՆ:

Հայոց հողը բերքաբեր է. մեր քաջերի թափած արյունով է սնվում , դեռ պիտի

Մեսրոպներ ու Տիգրաններ ծնվեն, քեզ նման ըմբոստ ու վեհ պոետներ...

Ես տեսնում եմ քո տողերում մոխիրներից հառնող երկրիս պայծառ ապագան, զարթոնքն ու ծաղկումը, պայքարով ծավալվող ու տարածվող կապու՛յտ, կապո՛ւյտ մի խաղաղություն.

Ու պոետներն՝ ըմբոստ ու վեհ, որպես դարի իմաստուն,

Պիտի երգեն քո անունը որպես անհաս փառքը մեծ,

Եվ քաջերը, որ քեզ համար երեկ կորան սև մարտում,

Պիտի հանգիստ ննջեն, երկի՛ր, քո վիրավոր գրկի մեջ:

Ու վեհ պոետները պիտի երգեն, Արմեն Ավո, ծաղկած գարունները հայի, վերածնունդը քո հարազատ Արցախ աշխարհի...Պիտի դարերին տանեն որդեկորույս մայրերի՝ վշտից ծնված ու զորեղացած հպարտ ոգին, պիտի գովերգեն ցավից ծնված պայքարն ու ազատությունը: Ապրելու է Արցախը,քանի որ մեր ակունքներն Արցախում են, արյան գնդիկով ամուր կպած ենք մեր արմատներին, սիրում ենք, պաշտում, իսկ ինչը շատ ես սիրում ու սրտիդ մոտ ես պահում, քոնն է նորից դառնում:

Այս պոեմում մեր ինքնությունն է, Արարատյան երկրի կորուստները, ավերումը 21-րդ դարում, ժամանակավոր խեղդված ու նորից ծնվող երազներն են , հոգով մեռած, բայց կրկին իրեն վերագտնող զտարյուն հայի՝ դեպի դարեր տանող արդար ուղին...

Հայրենիքին պատած ցավն ու վրեժի միտքը այլ կերպ է ներկայացնում Անահիտ Տարոնցին.<< Զինվո՛ր, քո արյան գույնը թող փորագրվի դարիս ճակատին>>: Մեծն Շիրազի մտքի նորօրյա բնորոշումն է: Կործանվող հայրենիքի փրկության ուղին այստեղ ևս վրեժի ու պայքարի մեջ է.

Ձեռքդ տուր, Զորավա՛ր, վրեժիդ կրողը չկա...

Արցախի անկանխատեսելի կորուստը բյուր վերքեր է բացել պոետների սրտում, դարձել է մտորումների առանցքը: Անցյալը ցավաբեր է, ներկան՝ անորոշ , գալիքը՝ մշուշապատ: Օրավուր նկատվում է հայրենիքը կորցնելու վտանգը: Տագնապում է Արմեն Ավոն.

Ու ես՝ որպես բանաստեղծը քո խելագար,

Քո վիրավոր ու վշտակեզ զինվորը հեգ,

Մի՞թե պիտի ողբամ ցմահ բախտիդ համար

Եվ կարոտի գրչով երգեմ սարերդ սեգ...

Հայրենիքին հասած պատուհասը խլեց նաև պոետի թանկ եղբորը ... Կորստի անամոք վշտից, կարոտից ու մենակության զգացումից ծնվել են հրաշք բանաստեղծություններ...Փնտրում է հարազատին ամենուրեք՝ տան ամեն անկյունում, դրսում...Թվում է՝ ուր որ է դուռը կբացվի, և սիրասուն եղբայրը տուն կմտնի, բայց, ավա՜ղ.

Երկար սպասված օրն է դարձի, և սակայն

Սառնությունն է հիմա տիրում հոգիս բորբ,

Ինչպե՞ս գնամ իմ խրճիթը հայրական,

Ինչպե՞ս խոսեմ շիրիմի հետ իմ եղբոր:

Չնայած արհավիրքներին ու սարսափներին, անորոշությանը՝ լավատեսությունը չի լքում պոետին : Մեծ ողբերգությունից հետո հայրենիքը դեռ կանգուն է, նույնիսկ ժպտում է, դիմանում է, որ հետո ըմբոստանա աշխարհի դեմ, ժպիտով լացը խեղդած՝ դեռ հավատում է.

Պիտի ժպտաս, իմ հայրենիք...

Պիտի ժպտաս, որ չկարծեն,

Թե թույլ ես դու...

Միաձույլ են հայրենիքն ու մայրը.մայրը ակունքն է կյանքի ու երջանկության, զավակի սիրո կենտրոնը ,միակ հրաշքը կյանքում գոյություն ունեցող բոլոր հրաշքներից, մի տաքուկ ու ջերմ գիրկ, ում համար զավակը միշտ փոքր է, խնամքի ու գուրգուրանքի կարիք ունի ու ինչ բարձունքների էլ հասնի կյանքում, նույն մանուկն է դեռ.

Ուրիշների համար՝ ես հզոր երգիչ,

Ուրիշների համար՝ ես Արմեն Ավոն,

Քեզ համար, մա՛յր իմ, մանուկն եմ այն ջինջ,

Այն ոտաբոբիկ ու փոքրիկ Ամոն:

Ազգին պատած համատարած ողբերգության մեջ փոխվում է նաև մոր կերպարը, մայրը դառնում է բոլոր ցավերի լուռ կրողը, հերոս որդու պատրանքներով ապրողը, կարոտով սպասողը...Մոր կոտրված ու վիրավոր սրտին չկա բալասան, չկա սփոփանք.

Ա՜խ, վշտի ծովում տառապած մայրեր,

Ինչո՞վ սփոփեմ ձեր խոցված հոգին,

Ինչպե՞ս մեղմացնեմ ես թախիծը ձեր,

Դառնամ բալասան ձեր անանց վերքին...

Ժամանակի փոթորիկների միջով անցած զինվոր-պոետն իր խոհերը, հոգու խռովքը, հույզերը , զգացողությունները դարձնում է երգ ու նվիրում ծառայակից ընկերներին, քանի որ բոլորն էլ նույն ճակատագրի կրողներն են, միասին անցել են մահվան հովիտներով.

Արի, ընկե՛ր, խոսենք մի քիչ , մի քիչ լսենք իրար,

Մի քիչ վիճենք այս աշխարհի ու այս կյանքի մասին...

Հիշենք նորից օրն առաջին, զրույցներն այն պերճ,

Պատերազմի օրերը՝ սև, հոգնաբեկ ու տխուր...

Հուշերը զինվորներին մտովի հայրենի եզերք են տանում . սահմանից անդին տունն է հայրենի, հարազատ ու թանկ մարդիկ են, մայրերն են նրանց հեգ՝ ամեն օր իրենց զինվոր որդիների համար աղոթող ու Աստված կանչող...Անորոշություն կա զինվոր տղաների հոգում.

Օրը մթնեց,բաժա՛կդ բեր,

Այս մի թասն էլ խմենք,

Ի՞նչ իմանաս, թե աշխարհում

Վաղը մենք ուր կընկնենք...

Արմեն Ավոն այս տողերով ասես շարունակում է իր հոգևոր նախորդի՝ Համո Սահյանի կենսափիլիսոփայությունը.

Խփի՛ր, այս պահի կենացը խմենք,

Մի վայրկյան հետո գուցե չլինենք...

Կյանքի հիմքը՝ սերը, մերօրյա պոեզիայում դրսևորվում է տարբեր ձևերով ու տարբեր իրավիճակներում, սիրած աղջկա հանդեպ սերը կռվող զինվորի հոգում կրակներ է բորբոքում, արժևորվում է հայրենիքը, սահմանների պաշտպանությունը կարևորվում է կյանքից... Հոգեբանական նուրբ շերտեր կան Արմեն Ավոյի սիրո երգերում: Բանաստեղծը քնարական ուղերձը սիրած աղջկան է հղում չափածո նամակի տեսքով: Հույզերը, կարոտն ու սպասումը հերթափոխում են իրար. Որքա՜ն սեր, լույս ու հույս են հորդում <<Նամակ>> բանաստեղծության առաջին երկու տողից.

Ես կգամ որպես ծեր մայրամուտ,

Որպես լույս՝ խավարում մոլորված...

Այսինքն՝ պատերազմի թոհուբոհով անցած, ցավ, դավ, դառնություններ տեսած, հարազատ եղբայր, թանկ ընկերներ կորցրած զինվորը տուն կգա իմաստնացած, հարուստ կենսափորձով, կյանքն արժևորած՝<< որպես ծեր մայրամուտ>> նոր արշալույս դառնալու համար.

Կսեղմեմ քեզ կրծքին իմ ամուր,

Կշոյեմ հայացքդ խռոված:

Երկրորդ բանատան առաջին երկու տողերում փարատվում են տխրությունն ու թախիծը.

Ես կգամ, երբ մթնես դու կրկին,

Երբ լինես հուսահատ ու տրտում...

Գալիս է այնպիսի պահ, երբ հիասթափությունն է հյուր գալիս, երբ ապրելու հույսը լքում է, և թվում է, թե մոռացման մշուշով է պատվել շուրջբոլորը...Երբ խամրում են պայծառ գույները, մի նոր լույս է առկայծում.

Երբ գրկի քեզ սերը մի ցավով,

Եվ անզոր հեկեկաս...ես կգամ:

Սիրո կարոտը մերթընդմերթ փոխում է գույները, զինվոր տեսնելիս հուշերն են արթնանում. կգա զինվորն այն ժամանակ, երբ հույսը լքի սիրած աղջկան և մտովի խռովի...Կգա, ու կբուրեն վարդերը սիրո՝ որպես հին խոստում և մի նոր կյանքի գեղեցիկ սկիզբ: Ու կաթում են արցունքները երջանկության... Որքա՜ն շքեղ երազանք է.

Ես կգամ՝ ձեռքերում իմ վարդեր,

Կբերեմ արշալույսն իմ հոգու,

Մոռացած չար երազն այս արդեն՝

Կարոտով կփարվենք մեկմեկու:

Սերը ստիպում է կարոտել, երազել, պայքարել, հավատալ, հավատով հաղթել ու ապրել...Սակայն սերը կարող է նաև դավել, նույնիսկ դրանից հետո էլ լուսավոր է պոետի սիրո թախիծը, վեհ ու վսեմ է սիրո հիշողությունը.

Քո սերը ցավ էր ու տանջանք,

Իմ սերը աղբյուր էր անեղծ,

Իմ սիրով դարձար հրեշտակ,

Քո սիրով դարձա բանաստեղծ:

Սիրո ծալքերն են մեկ-մեկ բացվում, կարոտից ծնվող թախիծը, հուշերին շաղախված, վեհացնում է հոգին,սիրուն տալիս այլ բանաձևում...Սիրո հետ են կապվում բոլոր գեղեցիկ պատկերներն ու պայծառ մտքերը,ապագայի հեռանկարները,սերը երգի պես պիտի թովեր հոգին պոետի,բայց բերեց մոռացում ու ցավ.

Քո աչքերի մեջ իմ ապագան էր մեղմորեն հյուսվում...

Ե՛վ երկրի վրա, և՛ թե երկնքում

Չգտա ուրիշ գեղեցկություն վեհ,

Որ թովեր հոգիս:

Մեռնող օրերի երգի պես հիմա

Դատարկ է հոգիս...

Սերը չի մարել, ապրում է պոետի հոգու գաղտնի ծալքերում, ինչքան էլ նա իրեն համոզում է , թե մոռացել է, բանաստեղծական տողերն հակառակն են ասում.

Ես գիտեմ ,այո՛,

Սիրում եմ դեռ քեզ,

Սակայն չեմ ուզի երբեք՝ ետ գաս դու...

Լուռ է բաժանումը, ամեն մի օրը ոչինչ է արդեն, անցյալ է, թող խեղդվի սերը իր ջինջ հոգում, բայց երբեք չլինի վերադարձի կանչ, <<ավելի լավ է վառվել սիրո մեջ>>:

Սա այն կորցրած սերն է, որ միշտ հիշվում է, ցավ ու կարոտ է բորբոքում, բայց ապրում է հպարտորեն.

Եվ պիտի վառեմ ես նորից, անգին,

Մեր սիրուց ծնված գրքերը այն լուրթ...

Սիրո այս կուսական աշխարհը ստիպում է պոետին միշտ նորովի նայել կյանքին, սիրել կյանքն ու երազել, երազել անընդմեջ: Ստիպում է տառապել, տառապանքից բարձրանալ, վեհանալ...

Իսահակյանի ու Թումանյանի պես պատանի պոետը պեղում է հայ ժողովրդական ավանդազրույցներն ու նրանց փրկում մոռացության մշուշից, նոր շունչ է տալիս...Կենդանացել է Արցախի պատմական վայրերից մեկը՝ այժմյան Վահինը՝ Հին Գայլը: Ասես մոտեցել են դարերն ու զրույցի բռնվել...Այնքա՜ն բան ունեն պատմելու, ասելու իրար, ասես անցյալը ներկա է դարձել ու իր խորախորհուրդ ծալքերը բացել...

Ըստ ավանդության՝ մարդիկ շատ դարեր առաջ երկու ժայռերի վրա երկու մատուռ են շինել: Այն ե՞րբ է եղել...Ո՞վ իմանա...Գուցե անհիշելի ժամանակներում...Ու երբ երաշտն է նեղել, անձրև չի եկել՝ ոռոգելու հացահատիկի արտերը, գյուղացիները Ծաղկոտ ձորից, Կուշաման գետից դույլերով ջուր են հանել վերև, թրջել մատուռի պատերը, հին խաչքարերը.

Եվ ասում են, թե

Աստված լսում էր աղերսը մարդկանց,

Տեսնելով նրանց կամքը երկաթե՝

Անձրև է տալիս դաշտերին անանց:

Իսկ երբ ջրհեղեղի նման տեղատարափ անձրևն է թափվում երկնքից, փչացնում բերքը գյուղացու, հավատով անշեջ նորից սարն են բարձրանում գյուղացիները, կրակ են վառում մատուռի պատերի կողքին, աղոթք մրմնջում Աստծուն, որ արև բերի, ու լսում է Աստված ձայնը նրանց. արև է ծագում: Հավատն է օգնում, հավատն ամենազոր՝ մարդկանց հոգիներում ամուր նստած.

Եվ ասում են, թե այժմ էլ այնտեղ

Ավեր մատուռի քարերը դեռ կան,

Որ վշտից խոցված՝ սպասում են անդեղ,

Որ մարդիկ նորեն իրենց գիրկը գան:

Մեր ժողովրդին բնորոշ է ամենածանր իրավիճակում էլ անգամ չկորցնել հումորի զգացումը: Ես դա ամեն անգամ զգացել եմ հայկական ժողովրդական էպոսում:Ասես մեր դարավոր ցավից ծնված, էպոսից դուրս թռած հերոս լինի Արմեն Ավոն՝ իր խորունկ մտքերով,հումորի բարձր զգացումով... Հայ ժողովրդի կենցաղին բնորոշ է ու արդիական ուղղվածություն ունի Արցախի բարբառով գրած <<Վեճ>>կատակերգը: Նպատակը կատակի միջոցով մարդկանց թերությունները վերացնելն է.

-Էլի հարբա՞ծ եկել ես տուն,

Խոսք էիր տվել, որ չես խմի,

Ես քո համար ոչինչ չարժեմ,

Հերիք է, քի՛չ հոգիս հանի:

Ավելի ուշագրավ է պատասխան խոսքը, որն ընդգծում է նաև հայրիշխանության խորհուրդը, տղամարդու խոսքի ու դերի կարևորությունը.

-Ձենդ կտրի, ա՛յ անամոթ,

Տու գիդումչս քու տերնում ես,

Ես իրավունք օնի գոռամ,

Բայց տու ձենտ պիտի կտրես:

Հետաքրքիր ու դիպուկ երկխոսությամբ, աննկատ վեճը հասնում է գագաթնակետին, ու բավականին խորիմաստ է հանգուցալուծումը.

- Ինքան շատ ես հոգիս հանում,

Այնքան շատ եմ ես սիրում քեզ,

Ինձ քեզանից ու՞ր ես վանում,

Արի սիրով լինենք, ի՛մ սեր:

Ա՛յ ժողովուրդ, միշտ իմացեք,

Սերը էնա, վեր հինչ ինի,

Միշտ հանդուրժես ու հասկանաս

Ու ուրան ճիշտ ուղով տինիս:

Այնքա՛ն մտերմություն, սեր ու ջերմություն կա հարբեցող գյուղացի ամուսնու և

քաղաքից եկած ու միշտ նրանից դժգոհող կնոջ վեճի մեջ, որ նույնիսկ հարբեցողությունը անընդունելի ու բացասական երևույթ չի թվում այստեղ.այնքա՛ն բնական ու հումորով է, որ կարդում ես ու ժպտում, ու այդ ժպիտից ծնվում է հիացմունք երիտասարդ տաղանդի գրի հանդեպ. ակամայից մտածում ես, որ այսպիսի տաղանդ ունեցող ազգը պիտի հարատևի: Այդ հարատևության խորհրդով է շնչում <<Կարմիր շոր հագած մասրենու թփեր>> բանաստեղծությունը, որը Համահայկական գրողների միության կողմից 2021 թվականին արժանացել է առաջին կարգի մրցանակի:

Հնչում է դարի ճակատագրական հարցը.

Կարմիր շոր հագած մասրենու թփեր՝

Կանաչ լեռների կրծքին ծվարած,

Հարյուր տարի անց ձեզ ո՞վ կերգի

Ո՛վ կհիշի ձեզ հարյուր տարի անց...

Հռետորական այս հարցադրման մեջ է պատասխանը:Անկասկած,մասրենու թփերն արյունով ջրած հայ քաջորդիների զավակներն են ապրելու, դարերով հայրենի հողին կառչած, իր հողն ու այգին քրտինքով սնած, կորդը այգեստան դարձրած, բարիք ստեղծող, արմատներն հայրենի հողին ամուր մխրճած արցախցին է վայելելու այդ բարեբեր հողն ու ջուրը ու նաև քարեղեն հիշատակների առաջ խունկ ու մոմ է վառելու:

Քարն էլ պատմություն ունի,ամեն քարը մի հիշողություն է, մի կենդանի առասպել, ճակատագիր:

Քարերի հետ մանկուց շատ եմ զրույց արել,

Շատ գաղտնիքներ նրանք ունեն հոգում...

Սա այն աշխարհն է, ուր բնությունը, տվյալ դեպքում՝ քարը մարդու համար դառնում է հավիտենության թարգմանը, սերունդների կապի մեկնիչը: Հազար առեղծվածներ կան քարերի մեջ, բյուր գաղտնիքներ, երազ ու տենչ՝ աստղերին հասած:Քարերը վկան են մեր դաժան պատմության, անցյալն են մեր արտաքուստ լուռ, բայց շատ խոսուն...Քարերի լեզուն բարդ է, դժվարհասկանալի...

Փլված քարե՛ր ծեր ժայռերի,

Գետի ջրին կարոտ քարեր,

Ջրով հարբած մամռոտ քարեր,

Քարե՛ր մռայլ հին դարերի:

Ես ժպտում եմ ձեզ մեղմաբար,

Որդիաբար ձեզ ողջունում,

Իսկ դուք թեքում հայացքներդ,

Չեք նկատում ինձ երևի...

Անվերջ կարդում եմ մաքրաբույր, հայրենաշունչ տողերը , կարդում եմ ու ժպտում... Հիանում եմ...Նկատում եմ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՂԱՆԴԻ պոեզիայի պատկերավոր, անդարտ աշխարհը, հզոր ոգին...Պատանի պոետը՝ Արմեն Ավոն, հասել է մտքի կատարելության...Գրել է նաև քառյակներ , չորս տողում ամփոփել է իր կենսափիլիսոփայությունը.

Ունայն է ամեն ինչ, պղտոր ու խավար,

Աշխարհում մարդը հավերժ չի մնում,

Լացով գալիս է, մտնում այս աշխարհ,

Լացով էլ կյանքից ընդմիշտ հեռանում:

Պոետի երգերում բառերը դառնում են մեղեդի, դառնում են պատկեր՝ գույների մի զարմանահրաշ համադրում, ուր բնությունը ներշնչանքի աղբյուր է, ձորն անսիրտ է, սարը՝ անձրևից մաշված, ժայռը ծեր է, խաչքարի վրա Աստծո թախիծ է, միտքն արթուն է ,մանկության երազն անգին է, երգը կույս է.

Ես լեռներից ծնված մասրենի եմ, մարդի՛կ,

Լուսաբացի արևն իմ ճակատն է շոյում,

Ինձ մի՛ փնտրեք հեռվում, ես այստեղ եմ՝ մոտիկ,

Ես բնության ծոցից անվերջ ձեզ եմ նայում...

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից պոեզիան զարգանում է, ինքնավստահ ու հաստատուն քայլերով նոր տաղանդներ են բացահայտվում, ինքնատիպ խոսք է հնչում...Ժամանակի իրողությունները դառնում են պոեզիա:

Հիմնականում ներկայացրի մի տաղանդավոր պատանու՝ ԱՐՄԵՆ ԱՎՈՅԻ երգերի թեմատիկան, քանի որ նրան տեսա դարերի հավերժական երգում ու երթում...

Ընդամենը ցույց տվեցի տաղանդաշատ պատանու երգերի ուղղվածությունը, բայց նրա պոեզիայի խորախորհուրդ ծալքերը դեռ պիտի բացվե՛ն ու բացվե՛ն...

Արմեն Ավոյի պոեզիան մի ամբողջ կուլտուրա է, մշակույթ է, արժեհամակարգ է:

Նրա ստեղծագործությունները սերունդներ են կրթելու ու դաստիարակելու...Խոսում է բոլորիս սրտից ու մտքից, իր սերնդի ողբերգությունն է ներկայացնում, հայրենիքի կործանումը... Պոետն իր հզոր լավատեսությամբ ապագայի հանդեպ հավատ է ներշնչում, կոտրված սրտով սրտեր է ամոքում..

Լուսավոր ու պայծառ սեր է Արմեն Ավոն բերում հայ պոեզիա, անկեղծություն ու մաքրություն, հայրենի հողի բույրն է բերում, կարոտները,բնության մշտահմա մեղեդին, գետերի շառաչը՝ ծեր թթենու արցունքառատ ճյուղերով...

Համոզված եմ, որ կլինի արժեքների վերանայում, և Արմեն Ավոյի գործերից տեղ կգտնեն դպրոցական ծրագրերում ու դասագրքերում:

Պատանի պոետը հստակ արժևորել է իր պոեզիան, այն մոտեցրել է ժողովրդի սպասելիքներին, բարձրաճաշակ ընթերցողի զգայական աշխարհին:

Նարեկացիական անմահության՝ <<Ու թեպետ որպես մի մահկանացու պիտի վախճանվեմ, Բայց այս մատյանի հարակայությամբ կմնամ անմահ>> Ավոյական խորհուրդը նրբահյուս ելևէջներով, բնությանը ձուլվելու անհագուրդ տենչով զրնգում է դարի խռովահույզ սրտում.

Գիտեմ՝ պիտի գնամ, կորչեմ անհետ վիհում,

Խառնվեմ քար ու ձորին, դառնամ մի քար մամռած

Եվ մոռացվեմ, ինչպես այն մասրենին ժայռի,

Իսկ երգերս անբիծ, իսկ երգերս խոհուն,

Որտեղ սիրտս է նիրհում, որտեղ սիրտս է այրված,

Կտամ երկնի աստվածներին վսեմ:

Եվ կկորչեմ անմիտ դարերի մեջ այս խեթ,

Իսկ դուք կասեք միայն առասպելի ձևով

Եկող սերունդներին մի պատմություն անմեռ,

Որ եղել է հնում մի խելագար պոետ,

Անանուն ու անբիծ սիրտը լցված սևով,

Որ պարզություն երգեց, երգեց անտուն սերեր:

Գիտեմ՝ պիտի կորչեմ կույս ձորերում անհետ,

Պիտի գնամ հավերժ, պիտի գնամ լույսով,

Գնամ, դառնամ մաքու՛ր իրիկնամուտը ձեր...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Ա. ԲՈԴՈՍՅԱՆ, Վ.ՍԱՖԱՐՅԱՆ- <<ՀԱՅ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>, ԵՐԵՎԱՆ 1987
2. Ա. ՏԱՐՈՆՑԻ – ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3. Ա. ԱՎՈ – ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ